# ԿԱՐԾԻՔ

**Գայանե Խաչիկի Ղազարյանի «Հայրենադարձները Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքի համատեքստում (1946-1953 թթ.)» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ**

## Թեմայի արդիականությունը և գիտական կարևորությունը

Հայ պատմագիտության մեջ դեռևս խորհրդային տարիներից ձևավորվել է սփյուռքի ու հայ գաղթօջախների ուսումնասիրման դպրոց, որը արժեքավոր հետազոտություններով և ձեռնարկներով է հանդես եկել՝ ուսումնասիրելով հայ գաղթօջախների, սփյուռքի առանձին համայնքների պատմությունը: Սփյուռքում ևս բազմաթիվ հետազոտողներ, սփյուռքահայ մամուլը լայնորեն ներկայացրել է հայ համայնքների կյանքն ու գործունեության ուղղությունները, Հայրենիքի հետ կապերի շրջանակը:

Սփյուռքահայերի, մասնավորապես հայրենադարձների առօրեականության հարցերը նույնպես գտնվել են հայաստանյան և սփյուռքյան հետազոտող մասնագետների ու մամուլի ուշադրության ներքո, սակայն այս ուղղությամբ հսկայական աշխատանքի դաշտ կա, անաչառ ու ամբողջական վերլուծություն կատարելու, օբյեկտիվ ու սուբյեկտիվ խնդիրները բացահայտելու տեսանկյունից:

Դա անհրաժեշտ է խորապես հասկանալու և գնահատելու ինչպես խորհրդային շրջանի հայրենադարձության քաղաքականությունն ու ժամանակի իրողությունները, արձանագրված ձեռքբերումներն ու բացերը, այնպես էլ՝ ֆիքսելու և համադրելու ներկայումս տարվող քաղաքականության ու առկա իրողությունների համախումբը, հաշվի առնելու հայրենադարձների սոցիալ-հոգեբանական հարցերի շղթան, ինտեգրման առանձնահատկություններն ու ընդհանրական ակնկալիքները:

Ատենախոսության թեման այս իմաստով արդիական է ու պահանջված, ունի գիտագործնական կարևորություն, քանի որ ներկայացնում է հետպատերազմյան շրջանի Մեծ հայրենադարձության ալիքի մեջ ներառված հայրենակիցներին, Հայաստանում նրանց ընդունման, տեղավորման, ինտեգրման գործընթացները, հույզերն ու

Сканировано с CamScanner

հիասթափությունները, հարաբերությունների կառուցումն ու աղապտացիայի խնդիրները:

**Ատենախոսության կառուցվածքը, բովանդակությունն ու գիտական նորույթը**

Ատենախոսությունը կազմված է Ներածությունից, երեք գլուխներից, Եզրակացություններից ու Օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Ներածությունում հեղինակը հիմնավորել է ատենախոսության ընտրված թեմայի կարևորությունը, հայրենադարձության կազմակերպման նախադրյալները, խորհրդահայ իրողություններն ու հայրենադարձների առօրյա հարցերի կարևորությունը, առանձնացրել է նպատակն ու խնդիրները, տվել աղբյուրների ու գրականության վերլուծություն:

Առաջին գլխում ընդհանրական կերպով ներկայացված են հետպատերազմյան առաջին տարիների առօրյա կյանքի առանձնահատկությունները Հայաստանում, իսկ երկրորդ և երրորդ գլուխներում հեղինակը ներկայացրել է Խորհրդային Հայաստանում հայրենադարձների հաստատման, ինտեգրման, կուսակցական, խորհրդային գաղափարական իրողություններին հարաբերվելու, խնդիրների ու բռնաճնշումների պատմությունը: Կարևոր են առանձին անդրադարձները հայրենադարձների ու տեղացիների հարաբերություններին, կրթական, մշակութային ու հանրային կյանքի նոր դրսևորումներին, որոնք հայրենադարձների առօրյայի անբաժան մասը դարձան:

Եզրակացություններում հեղինակն ի մի է բերել իր ատենախոսության հիմնական եզրահանգումները, որոնք ժամանակի իրողությունների օբյեկտիվ արտահայտությունն են:

Ատենախոսն օգտագործել է արխիվային նյութեր, սկզբնաղբյուրներ, հուշագրություններ, ուսումնասիրություններ և հոդվածներ, մամուլ, ինչպես նաև բազմաթիվ հարցազրույցներ, որոնք արժեքավոր նյութ են պարունակում ուսումնասիրվող թեմայի շարադրման համար:

Ատենախոսության գիտական նորույթը նրանումն է, որ հեղինակը վերհանել և լուսաբանել է հետպատերազմյան շրջանի առօրեականության պատմության նորահայտ դրվագներ, որոնք եղել են հայրենադարձների կյանքի ու ինտեգրման առանձնահատուկ կողմերը, փորձել է խմբավորել փաստերը և տալ նրանց կենսագործունեության տարբեր ոլորտների վերաբերող իրավիճակների ամփոփ պատկեր: Արժևորելով հանդերձ ներգաղթի կամավորությունն ու երբեմն փրկօղակ լինելը տարբեր խմբերի համար՝ հեղինակը ամբողջացրել է հայրենադարձների

Сканировано с CamScanner

սպասումների, հույզերի, զրկանքների ու հաջողության պատմությունների օրինակները՝ խնդիրները քննելով ժամանակի պետական-կուսակցական քաղաքականության, հասարակական-քաղաքական կյանքի և հանրային ընկալումների, մոտեցումների ու իրողությունների լույսի ներքո:

**Ատենախոսության արժանիքները, գիտական շարադրանքը:**

Ատենախոսության արժանիքներից է թեմատիկ նյութի վերաբերյալ արխիվային ու հետազոտական աշխատանքների համակարգումն ու համադրումը, հայրենադարձների առօրյա կյանքի առանձին ասպարեզների առանձնացումը, փորձը ամբողջացնել ու ընդհանրացնել համեմատաբար պատմական կարճ ժամանակաշրջանի իրողությունները:

Ուսումնասիրության արդյունքում հեղինակը ընդգծել է հայրենադարձության կարևորությունը Հայաստանի ժողովրդագրական առաջընթացի, կյանքի տարբեր ասպարեզների զարգացման ու թարմ լիցքի հաղորդման տեսանկյուններից, միաժամանակ ցույց տալով սոցիալ-տնտեսական խնդիրները, ինտեգրման դժվարությունները, թույլ տրված սխալները, չարդարացված սպասումները, հույզերը, տեղացիների ու հայրենադարձների երբեմն բարդ հարաբերությունների կծիկը, անգամ՝ վերջիններիս ընդվզումներն ու փախուստի փորձերը:

Հեղինակը բարեխղճորեն հավաքել ու համադրել է խնդրո առարկա թեմայի վերաբերյալ առկա նյութերը, անցկացրել է հարցազրույցներ, ապահովել է տրամաբանական կապ, պատշաճ կերպով տվել է հղումներ:

Աշխատանքի աղբյուրագիտական բազան բավական ընդգրկուն է, որը թույլ է տվել կատարել առաջ քաշված թեզերի հիմնավորումը:

Ատենախոսության տեքստը և ձևավորումը համապատասխանում են գիտական խոսքի պահանջներին՝ լեզվառճական չափանիշերը ու շարադրված նյութը ակադեմիական են:

Սեղմագիրը արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

**Դիտողություններ և առաջարկներ:**

Աշխատանքի արժանիքների նշումով հանդերձ, կցանկանայինք ատենախոսի ուշադրությունը հրավիրել հետևյալ դիտողությունների ու առաջարկների վրա:

Сканировано с CamScanner

Կարծում ենք Ներածության մեջ, անդրադառնալով հանդերձ պարտադիր պահանջ հանդիսացող հարցադրումների լուսաբանմանը, ատենախոսը պետք է ավելի տեսանելի ու հստակ ընդգծումներով, բաժանումներով ներկայացներ Ներածության կառուցվածքը:

Կարծում ենք ավելի ճիշտ էր Ատենախոսության առաջին գլուխը, որը անդրադառնում է բացառապես Խորհրդային Հայաստանի հետպատերազմյան տարիների առօրյա կյանքի առանձնահատկություններին, որը ինչ-որ իմաստով մեծ նախաբան է, փոխարենը շարադրվեր հետևյալ վերնագրով՝ «Խորհրդային Հայաստանի հետպատերազմյան տարիների առօրյա կյանքի առանձնահատկությունները և Հայրենիքի մասին հայրենադարձների պատկերացումները»:

Այս կերպ կշահեր աշխատանքի առաջին գլուխը և Երկրորդ գլխի առաջին ենթավերնագիրը կլիներ իր տեղում: Այստեղ ներկայացված նյութը ավելի կամրապնդեր ատենախոսության առաջին գլխի կապը բուն տեքստի հետ, իսկ հիշյալ 2.1 ենթագլուխը դուրս կդրվեր հայրենադարձների՝ Հայրենիքում հաստատման ու ինտեգրման հիմնահարցերին անդրադարձող բաժնից, որոնք այս կամ այն չափով կրկին արտացոլում ունեին մյուս ենթագլուխներում:

Ատենախոսության 3.2 ենթագլուխը, որը վերնագրված է «Հայրենադարձների ներգրավումը Խորհրդային Հայաստանի պետական-կուսակցական և կրթամշակութային կյանքին», գտնում ենք, որ որոշակի անհամատեղելի են իրենց երկու մասերով, երկու բաղադրիչներով:

Ավելին՝ աշխատանքի 2.3 ենթագլխի՝ «Կոմունիստական-խորհրդային գաղափարները հայրենադարձներին ներարկելու փորձերը» և 3.2 ենթագլխի նյութը՝ այսպես Հայրենադարձների ներգրավումը Խորհրդային Հայաստանի պետական-կուսակցական կյանքին, կարելի էր միացնել՝ խուսափելով նյութի սփռվածությունից ու ստանալ այս հարցի վերաբերյալ հնարավոր լավ պատկեր:

Կարծում ենք ավելի արդյունավետ կլիներ, եթե աշխատանքում լիներ առանձնացված «հայրենադարձների սոցիալ-հոգեբանական ադապտացիայի խնդիրներ» ենթագլուխ, ինչն ավելի ընդգրկուն, ամուր և պատկերավոր կդարձներ աշխատանքը:

Сканировано с CamScanner

**Եզրակացություն:**

Այսպիսով, վերլուծելով Գայանե Խաչիկի Ղազարյանի ատենախոսությունը, վերը նշված արժանիքներով և դիտողություններով հանդերձ, գտնում ենք, որ այն ինքնուրույն, աղբյուրահեն, տեսականորեն հիմնավորված աշխատություն է, որը նոր լույսի ներքո է ներկայացնում մեր պատմագիտության կարևոր հիմնահարցերից մեկը:

Դիտողությունները, բոլորովին չեն նսեմացնում ատենախոսի կատարած աշխատանքը, ավելին՝ տեսանելի են դարձնում դրա հետագա խորացման հնարավորությունները:

Հաշվի առնելով վերագրյալը, արձանագրում եմ, որ սույն ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանների շնորհման կարգի 6-րդ և 7-րդ կետերին և պատմական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհման պահանջներին:

Ըստ այդմ՝ առաջարկում եմ «Հայրենադարձները Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքի համատեքստում (1946-1953 թթ.)» թեմայով թեկնածուական ատենախոսությանը տալ դրական գնահատական և ատենախոս Գայանե Խաչիկի Ղազարյանին շնորհել Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

ԵՊՀ, Պատմության ֆակուլտետի Հայաստանին հարակից երկրների պատմության

ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Հովհաննես Ստյոպայի Ալեքսանյան

Պաշտոնական ընդդիմախոս պ.գ.թ., դոցենտ Հովհաննես Ստյոպայի Ալեքսանյանի

ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ գիտական քարտուղար, բ.գ.թ. Ս.Հ.Հովհաննիսյան

03.07.2025

Сканировано с CamScanner